2016 թվականին կմեկնարկի **Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման** Ծրագիրը, որը նույնպես իրականացվելու է ՀՏԶՀ-ի կողմից:

**ՏՏԵԶ** Ծրագրի նպատակն է բարելավել ենթակառուցվածքային ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները՝ Հայաստանի ընտրված տարածաշրջաններում տեղական տնտեսության մեջ զբոսաշրջային ոլորտից ստացվող աջակցության ավելացման համար:

Ենթադրվում է, որ Ծրագրի իրականացմամբ Կոտայքի, Լոռվա, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում բնակիչներին և զբոսաշրջիկներին հասանելի կլինեն որակյալ հանրային ենթակառուցվածքներ, տարածաշրջանում կավելանա մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, իսկ վերականգնված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում՝ փոքր և միկրո ձեռնարկությունների քանակը:

Ծրագիրն ունի հետևյալ բաղադրիչներ.

**<u>Բաղադրիչ 1: Մշակութային ժառանգության կենտրոնների վերածնում և զբոսաշրջության երթուղիների զարգացում.</u>**

- **ժառանգության կենտրոնների վերածնում.** Այս ենթաբաղադրիչի նպատակը Գորիսում և Մեղրիում, Արենիում, Տաթևում և Տանձատափում հասարակական ենթակառուցվածքները, շինությունների ճակատամասերը, տանիքները, հանրային տարածքների, թանգարանների, փողոցների, ջրամատակարարումն ու փողոցային լուսավորությունը վերականգնելն է, այդ բնակավայրերը վերածելով զբոսաշրջային ուղղության բարձրորակ կենտրոնների:
- **Զբոսաշրջության երթուղիների զարգացում.** Այս ենթաբաղադրիչի նպատակը Հայաստանում գլխավոր զբոսաշրջային երթուղիների երկայնքով գտնվող առավել գրավիչ մշակութային և բնական ժառանգության վայրերի պահպանումը և կառավարման բարելավումը միասնական մոտեցմամբ ֆինանսավորելն է: Ընտրվել են հետևյալ վայրերը. Գառնին (տաճարը և կիրճը), Գեղարդի վանքը, Խոր Վիրապ վանքը, Արենիի շուկան և քարանձավը, Մոզրովի քարանձավը, Եղեգիսը, Զորաց Քարերը (Քարահունջ), Խնձորեսկը, Հաղպատը և Սանահինը: Ներգրավված վայրերում ենթադրվում է կառավարման պլանների նախապատրաստում, այցելուների համար նախատեսված շինությունների կառուցում, մշակութային ժառանգության հուշարձանների, թանգարանների և հարակից տների պահպանում, ինչպես նաև հարակից փողոցների և հասարակական ենթակառուցվածքների մատչելիության բարելավում:
- **Հանրային ենթակառուցվածքների տրամադրում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով.** Այս ենթաբաղադրիչի նպատակն է աջակցել Ծրագրի վայրում ընտրված մի շարք՝ զբոսաշրջության մեջ կամ ագրոբիզնեսում ներդրումներ կատարելու պատրաստ մասնավոր հատվածի անձանց, կոմպլեմենտար հանրային ենթակառուցվածք ներդնելու միջոցով:

**<u>Բաղադրիչ 2: Ինստիտուցիոնալ զարգացում</u>**

Այս բաղադրիչով կբարձրացվի Հայաստանի Զարգացման հիմնադրամի (ՀԶՀ), Պատմական և մշակութային ժառանգության պաշտպանության գործակալության (ՊՄԺՊԳ), ՀՏԶՀ-ի և տեղական ու տարածաշրջանային այլ կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունները և կատարողականությունը”

**Ծրագրի ընդհանուր արժեքը**

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 68 մլն ԱՄՆ դոլար, որից Համաշխարհային բանկի վարկը՝ 55 մլն դոլար, Հայաստանը կտրամադրի 13.75 մլն ԱՄՆ դոլար՝ որպես համաֆինանսավորում.